# ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Զանգեզուրումն էլ, ինչպես Անդրկովկասի այլ հայաբնակ գավառներում, կապիտալիզմի մուտքի հետ միասին, հեղափոխությունից դեռևս շատ առաջ, նկատվում էր նախկին նահապետական բազմանդամ գերդաստանի քայքայման պրոցեսը։ Այնպես որ մեր գիտարշավի այցելումների միջոցին ոչ մի գյուղում չհանդիպեցինք այնպիսի ընտանիքի, որտեղ մի հարկի տակ ապրելիս լինեին իրենց հոր հետ միասին մի քանի եղբայրներ իրենց բազմաթիվ թոռներով։ Միայն Վերին Կապանում, ըստ Գ. Ֆ. Զուրսինի վկայության, տակավին 1924 թ. պատահում էին 30—35 անդամից բաղկացած և նահապետական կյանքով ապրող գերդաստաններ[1]։ 1930—31 թվերին հանդիպում էինք այս ու այն գյուղում ընտանիքների, որտեղ զավակներ ունեցող մի քանի եղբայրներ բնակվում էին միասին և վարում էին ընդհանուր տնտեսություն։ Չափազանց սակավաթիվ բացառություն էին կազմում այնպիսի ընտանիքներ, որտեղ այդ եղբայրների հետ ապրելիս լինեին նաև ամուսնացած որդիներն իրենց զավակներով։ Բազմանդամ գերդաստանների բաժանմանը նպաստել էր և այն հանգամանքը, որ մինչև հեղափոխությունը զանգեզուրցիք գնում էին դրսի աշխատանքի—Բաքու, Անդրկասպյան երկիր կամ այլ վայրեր։ Այդ գնացողների թիվը տարեցտարի արագ աճում էր և ինքնուրույն դրամական եկամուտ ունեցող ամուսնական զույգերն արդեն ձգտում էին անջատվել և առանձին տնտեսություն վարել[2]։ Սակայն, չնայելով ընտանեկան կազմի մեջ կատարված այդպիսի արմատական փոփոխության, հարսանեկան սովորություններում կերպով դեռևս պահպանվում էին խոր հնությունից եկող ձևերը, որոնք ծագել էին վաղուց վերացած հասարակական կարգերի ժամանակ։ Այդ հարսանեկան ծիսակատարություններով դրվում էր նոր ընտանիքի հիմքը։

Զանգեզուրի բարբառը չգիտե ընտանիք[3] բառը, այլ այդ իմաստով գործ է ածում օջախ տերմինը։ Ձեն ասում՝ մեր ընտանիքի, այլ մէր օջախի աղջիկն է, ասում են՝ մէնծ օջախ ա, օջախը քանդվել ա։ Պաշտոնական հաշվառ-

---

[1] Курсин Г. Ф., Նշված աշխ., էջ 240։

[2] Հայկական գերդաստանը հմմտ. սերբական և բալկանյան սլավոնների «զադրուգայի» (задруга) հետ։

[3] Ընտանիք բառը պետք է բացատրել այնպես, ինչպես ընկեր բառը, որը կրճատում է ընդ-կեր, այսինքն՝ միասին ուտող, սեղանակից։ Այսպիսով ընտանիք կլինի ընդ-տանիք՝ մի տանիքի տակ միասին, մի տան մեջ ապրողներ։ Վերջին հասկացողությունը կապվում է հատկապես ընդհանուր բնակարան ունենալու հետ։ Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. II, էջ 1053 և 1061։ Марр Н. Я., Грамматика древне-армян. яз., էջ 105։